

ՆԻԿՈԼԱՅ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարի տեղակալ

ՊԱՏԺԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սկիզբը՝ նախորդ համարում:

Ինչպես հիշատակվել էր, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտները պայմանականորեն կարելի է դասակարգել ըստ ձևերի՝ դատական, արտադատական և խառը: Խառը ձևը ենթադրում է, որ բանտի վարչակազմի և դատարանի միջև գոյություն ունեն միջանկյալ հանձնաժողովներ (բյուրո, կոմիտե, խորհուրդ և այլն): Եթե փորձենք զուգահեռներ տանելով վերլուծել պայմանական վաղաժամկետ ազատման արտադատական և խառը ձևերում գոյություն ունեցող հանձնաժողովների էությունը և գործունեության սկզբունքները, ապա կարող ենք ասել, որ ուսումնասիրված հանձնաժողովները հիմնականում ունեն սոցիալական ուղղվածություն և դրանց գործունեության հիմնական սկզբունքներն իրավական առումով ամրագրված են: Փորձենք մանրամասնել:

Անդրադառնալով պատժի պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի արտասահմանյան փորձին՝ խնդիր է հանդիսանում նաև ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում նշված ինստիտուտին վերաբերող հարաբերությունների կարգավորումը: Նշված ինստիտուտին վերաբերող հիմնական իրավահարաբերությունները նախևառաջ կարգավորվում են ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածով¹, իսկ պայմանական վաղաժամկետ ազատման հիմքերը, պայմանները և կարգը նախատեսված են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114-րդ հոդվածով²:

Պայմանական վաղաժամկետ ազատում հնարավոր է միայն այնպիսի պատժատեսակների կրումից, ինչպիսիք են ազատազրկումը (որոշակի ժամկետով կամ ցմահ) կամ կարգապահական գումարտակում պահելը, ընդ որում՝ մյուս պատժատեսակներից պայմանական վաղաժամկետ ազատումը պարզապես աննպատակահարմար է: Միաժամանակ հատկանշական է այն, որ պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում անձը կարող է լրիվ կամ մասնակի ազատվել լրացուցիչ պատժից:

Պայմանական վաղաժամկետ ազատման համար հիմք կարող է հանդիսանալ դատարանի համոզվածությունը, որ դատապարտյալն ուղղվելու համար կարիք չունի նշանակված պատժի մնացած մասը կրելու: Բացի այդ, դատարանը հաշվի է առնում դատապարտյալի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը: Այդ հանգամանքին կարևոր նշանակություն է տալիս նաև Հանձնարարականը, որի 8-րդ կետի համաձայն՝ պայմանական ազատված անձանց շրջանում ռեցիդիվի ռիսկը նվազեցնելու նպատակով պետք է հնարավոր դարձվի նրանց նկատմամբ մի շարք անհատական պայմանների պարտադիր կիրառումը, որոնց թվում է «փոխհատուցում վճարելը կամ տուժողներին այլ ձևով փոխհատուցելը» (այդ ղ թե հայցից բխող պարտավորությունները):

Պետք է առանձնակի ուշադրություն դարձնել դատապարտյալի ուղղված լինելու հանգամանքը ճշտորեն որոշելու հարցին: Դատապարտյալի ուղղման ցուցանիշները կախված են պատժի առանձնահատկություններից: Առավել լուրջ պահանջներ ներկայացվում են ազատազրկում կրող դատապարտյալներին: Մասնավորապես, նման ցուցանիշներ կարող են լինել ազատազրկման պայմանների պահանջների կատարումը, ուղղիչ հիմնարկի վարչակազմի կողմից խրախուսանքի միջոցների արժանացած լինելը, վերաբերմունքը հանձնարարված առաջադրանքներին, ընդհանուր կրթական և մասնագիտական ունակությունների բարձրացման նպատակամղվածությունը և այլն: Դատապարտյալի ուղղման մասին եզրակացությունը պետք է հիմնվի ոչ միայն պատժի կրման ընթացքում նրա վարքագծի, այլև՝ նրա անձի և հանցագործության բազմակողմանի գնահատման վրա: Նշվածը հաստատվում է նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածով, որի համաձայն՝ պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մարմնի կամ հիմնարկի վարչակազմը լսում է դրական բնութագրվող և տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման հարցը:

Հարկ է նշել, թե ինչպես է անդրադառնում այս հարցերի կարգավորմանը Հանձնարարականը: Հանձնարարականի 12-ից 15-րդ կետերը նվիրված են պայմանական (վաղաժամկետ) ազատման նախապատրաստմանը: Մասնավորապես, նշվում է, որ պայմանական (վաղաժամկետ) ազատման նախապատրաստումը պետք է կազմակերպվի բոլոր համապատասխան անձանց հետ սերտ համագործակցությամբ, ովքեր աշխատում են բանտում և ներգրավված են հետազատման վերահսկողությանը, և պետք է եզրափակվի նվազագույնի կամ սահմանված ժամկետի ավարտից առաջ: Բանտային ծառայությունները պետք է երաշխավորեն, որ դատապարտյալները կարողանան մասնակցել համապատասխան նախազատման ծրագրերի, միաժամանակ խրախուսվեն մասնակցություն ունենալու կրթական և ուսուցողական դասընթացներին, որոնք նրանց կնախապատրաստեն հասարակության մեջ ապրելուն: Ազատագրված դատապարտումների իրագործման համար այնպիսի հատուկ մոդալությունները, ինչպիսիք են կիսաազատությունը, բաց ռեժիմները (նկատի է առնվում բաց տեսակի ուղղիչ հիմնարկը) կամ խցերից դուրս գտնվող վայրերը, պետք է օգտագործվեն դատապարտյալներին հասարակության մեջ վերաբնակեցնելուն հնարավորինս նախապատրաստելու նպատակով:

Պայմանական (վաղաժամկետ) ազատման նախապատրաստումը պետք է ներառի նաև դատապարտյալներին պահելը, նրանց ընտանիքի և մերձավոր հարաբերակցվող անձանց հետ կապերի հաստատումը և վերահաստատումը, այն ծառայությունների, կազմակերպությունների և կամավոր միավորումների հետ կապերի հաստատումը, որոնք կարող են աջակցել պայմանական (վաղաժամկետ) ազատված դատապարտյալներին հասարակության մեջ ապրելը կանոնակարգելու գործում: Այս առումով, օրենսդրորեն պետք է սահմանվեն ազատագրված վայրը լքելու տարբեր ձևեր:

Պետք է խրախուսվի համապատասխան հետազոտման պայմանների և վերահսկողության միջոցների վաղ ուսումնասիրությունը: Հնարավոր պայմանները, օգնությունը, որը կարող է տրամադրվել, հսկողության պահանջները և այն իրականացնելը չհաջողվելու հնարավոր հետևանքները

պետք է հանգամանալից բացատրվեն դատապարտյալներին և քննարկվեն նրանց հետ:

Բացի այդ, ըստ Հանձնարարականի՝ այն չափանիշները, որոնց դատապարտյալները պետք է համապատասխանեն պայմանական (վաղաժամկետ) ազատվելու համար, պետք է լինեն հստակ, որոշակի և իրական: Մասնավորապես, մասնատիպ չափանիշներ են դատապարտյալի անձը, սոցիալական և տնտեսական հետևանքները, ինչպես նաև՝ վերականգնողական ծրագրերի մատչելիությունը:

Հետևաբար՝ դատապարտյալի ուղղված լինելու և պատժի հետագա կրման անհրաժեշտության բացակայության մասին եզրակացությունը պետք է կազմվի դատապարտյալների հետ նրանց հասարակություն վերադարձնելուն ուղղված աշխատանք կատարելու, ինչպես նաև՝ դատապարտյալի անձի և նրա կողմից կատարված հանցագործության բազմակողմանի և ամփոփ ուսումնասիրության հիման վրա:

Ենթադրվում է, որ դատարանը մնան եզրակացության կարող է հանգել միայն պատժի նշանակված ժամկետի որոշակի մասը դատապարտյալի կողմից կրելուց հետո: Վերջինս էլ հանդիսանում է պատժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման պարտադիր պայման: Այս կապակցությամբ Հանձնարարականի 6-րդ կետը սահմանում է, որ «նվազագույն կամ սահմանված ժամկետը չպետք է այնքան երկար լինի, որ պայմանական ազատման նպատակին հնարավոր չլինի հասնել»:

ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսվում են հանցագործության ծանրության աստիճանից կախված տարբերակված ժամկետներ: ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

1) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը,

2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը,

3) առանձնապես ծանր հանցագործության համար, ինչպես նաև նախկինում պայմանական վաղաժամկետ ազատված անձի (եթե պայմանական վաղաժամկետ ազատումը վերացվել է օրենսգրքի 76-րդ հոդվածի վեցերորդ մասով նախատեսված հիմքերով) նկատմամբ նշանակված

պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը,

4) նշանակված պատժի ոչ պակաս, քան երեք քառորդը՝ օրենսգրքով նախատեսված որոշակի հանցագործությունների դեպքում:

Վերոշարադրյալից հետևում է, որ նախկինում պայմանական վաղաժամկետ ազատված անձը, որի նկատմամբ այդ ազատումը վերացվել է, կարող է կրկին պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե փաստացի կրել է պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը: Պատժի նպատակներից ելնելով՝ նշված նորմի առկայությունը արդարացված է, քանի որ դատապարտյալների կողմից նման վարքագիծ դրսևորելը վկայում է այն մասին, որ վերջիններս չեն արդարացրել իրենց նկատմամբ նախկինում դրսևորված վերաբերմունքը և դեռևս չեն ուղղվել: Օրենսգրքում առկա է նաև վերապահում, որ ցանկացած պարագայում անձի կողմից ազատազրկման ձևով պատիժը փաստացի կրելու ժամկետը չի կարող 3 ամսից պակաս լինել: Այս դրույթը ևս արդարացի է, քանի որ այս ժամկետը անհրաժեշտ է պատիժը կատարող մարմնին՝ համոզվելու համար դատապարտյալի իրական, այլ ոչ թե կեղծ ուղղման կապակցությամբ:

Օրենսդիրը փաստորեն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորություն է տալիս դատակարգման ցանկացած խմբի դատապարտյալի համար, որը ՀՀ քրեական օրենսգրքի նվաճումներից է, և որն էլ էականորեն ընդարձակել է պատժից ազատելու այս տեսակի կիրառման սահմանները՝ տարածելով այն նույնիսկ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ: Մասնավորապես, ցմահ ազատազրկման նշանակումը վկայում է ինչպես կատարված արարքի, այնպես էլ՝ այն կատարող անձի հասարակական մեծ վտանգավորության մասին: Ուստի, օրենսդիրը սահմանում է, որ նման անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ վերջինիս կողմից հետագա պատիժը կրելու նպատակահարմարությունն առկա չէ, և դատապարտյալը փաստացի կրել է ազատազրկման ոչ պակաս, քան քսան տարին:

Յմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ պայմանական վաղաժամկետ ազատման կիրառման անհրաժեշտության մասին է վկայում նաև Հանձնարարականի 4-րդ կետի հետևյալ դրույթը. «ազատազրկման վնասակար հետևանքները նվազեցնելու և դատապարտյալների այն պայմաններով վերականգնվելու նպատա-

կով, որոնք փորձում են երաշխավորել հասարակության «արտաքին կողմի» անվտանգությունը, օրենքը պայմանական վաղաժամկետ ազատումը պետք է հասանելի դարձնի բոլոր դատապարտյալների, ներառյալ՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար»: «Յմահ ազատազրկվածները» երբևիցե չպետք է զրկվեն ազատում ստանալու հույսից: Ըստ Հանձնարարականի, նախ և առաջ, ոչ ոք չի կարող հիմնավորել, որ ցմահ ազատազրկման դատապարտվածները միշտ վտանգավոր կմնան հասարակության համար: Երկրորդը, այն անձանց պահելը, ովքեր չունեն ազատման հույս, առաջացնում է կառավարման խիստ խնդիրներ համագործակցության դրդապատճառներ ստեղծելու պայմանների և վնասակար վարքագիծը ուղղելու, ինչպես նաև անհատական զարգացման ծրագրեր կազմելու, պատժի պլաններ կազմակերպելու և անվտանգության ապահովման գործում: Այն երկրները, որոնց օրենսդրությունը նախատեսում է ցմահ ազատազրկումը որպես պատժատեսակ, պետք է նաև ստեղծեն այդ պատիժը տարիներ հետո վերանայելու հնարավորություններ կանոնավոր ու սահմանված պարբերականությամբ, որպեսզի սահմանեն՝ արդյոք ցմահ ազատազրկման դատապարտված անձը կարող է կրել պատժի մնացած մասը հասարակության մեջ և ինչ պայմաններով ու ինչպիսի վերահսկողության միջոցներով:

Պայմանական վաղաժամկետ ազատման հարցերն ուսումնասիրելու և Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից դրանց մարդու և հասարակության շահերից բխող և արդյունավետ լուծումներ առաջարկելու նպատակով աշխատանք է տարվել և տարվում նաև ԵԽ-ի կողմից, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջին տարիներին պայմանական ազատման (պայմանական վաղաժամկետ ազատում) ինստիտուտի կիրառումը կրճատվել է մի շարք անդամ պետություններում: Դրա պատճառները հիմնականում երկուսն են, որոնք ներառում են դատապարտյալների (ազատազրկման մեջ գտնվող անձանց) շրջանում այնպիսի կառուցվածքային փոփոխությունները, ինչպիսիք են՝ դատապարտյալների բարձր տոկոսը, որոնք դատապարտվել են բռնության, թմրադեղերի հանցավոր շրջանառության, սեքսուալ չարաշահման կամ սպանության կատարման համար և հանցավորության որակի փոփոխումը, ինչպես նաև այն մարմինների դիրքորոշման փոփոխությունը, որոնք պատասխանատու են պայմանական

ազատման վերաբերյալ որոշում ընդունելու համար: Եվրոպայի խորհրդի մի շարք պետություններում պայմանական (վաղաժամկետ) ազատումն առկա է տեսականորեն, բայց ոչ գործնականում (օրինակ՝ Վրաստանի Հանրապետություն): Դատավորաբար պատճառաբանվում է այն փաստով, որ պայմանական ազատված հանցագործություն կատարած անձանց վերահսկողության ծառայությունները դեռ լիարժեք չեն գործում կամ բարձր է ռեցիդիվի մակարդակը:

Այս իրավիճակը բացասական է և փոփոխման կարիք ունի այն ժամանակ, երբ բոլոր եվրոպական պետությունները հանդիպում են լուրջ խնդիրների հանցավորության և դրա կրկնակիությունը նվազեցնելու, ինչպես նաև ազատագրկման վայրերի ծանրաբեռնվածությունը և բանտերի «բնակիչների» թիվը նվազեցնելու գործում: Եվրոպայի խորհրդի կողմից այս հարցերով տարվող աշխատանքը հստակ ցույց է տալիս, որ պայմանական ազատումը պետք է դիտվի որպես շատ արդյունավետ և կառուցողական միջոցներից մեկը, որը ոչ միայն նվազեցնում է ազատագրկման միջին տևողությունը, այլ նաև էականորեն աջակցում է հանցագործի՝ հասարակություն պլանավորված վերադարձին³:

Վերոհիշյալ պատճառները Քրեական խնդիրների եվրոպական կոմիտեին (CDPC) ստիպեցին տալ համապատասխան տեղեկանքի ձևով դրույթներ իր խորհրդատվական մարմիններից մեկին՝ Քրեակատարողական համագործակցության խորհրդին (PC-CP) պայմանական ազատման մասին ուսումնասիրություն իրականացնել՝ հանձնարարականի նախագիծ նախապատրաստելու նպատակով⁴:

Բացի այդ, PC-CP-ն իրականացնում է օրենսդրության և պայմանական ազատման օգտագործման վերաբերյալ ուսուցում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում: Այս ուսուցումը հիմնված է Հիլդա Թուրեքսի գլխավոր հարցաշարին ուղարկված 36 պատասխանների վերլուծությունների վրա՝ Փյեր Տուրնիերի աջակցությամբ: PC-CP-ն կազմել է հանձնարարական և բացատրական հուշագիր, որին Հիլդա Թուրեքսի վերոհիշյալ վերլուծությունը կցվում է որպես հավելված⁵:

Այսպիսով, Եվրոպայի խորհրդի Նախարարների Կոմիտեն խրախուսում է միջազգային համագործակցությունն ընդհանուր սկզբունքների շուրջ պատիժների կատարման բնագավառում, որը

պետք է լինի իր անդամ պետությունների կողմից ընդունված հիմնարար արժեքներին համապատասխան՝ հարգելով մարդու իրավունքները, ժողովրդավարության սկզբունքները և օրենքի տառը: Եվ դրանով հանդերձ, պայմանական ազատումը ապահովելով պլանավորված, աջակցված և հսկվող վերախնտեզրումը հասարակությանը հանդիսանում է հանցագործությունների կրկնակիությունը կանխելու և դատապարտյալների վերականգնման առավել արդյունավետ և կառուցողական միջոցներից մեկը⁶:

Ինչպես վերը նշվել է, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի բովանդակության վերլուծությունից բխում է, որ Հայաստանում գործում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի խառը ձևը: Իհարկե, քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացին զուգահեռ, նախկին դատական ձևից անցումը խառը ձևին կարելի է դիտել որպես առաջընթաց քայլ (անկախ ժամանակային նպատակահարմարության հարցին անդրադառնալու): Սակայն խիստ կարևորվում է այն հանգամանքը, թե որքանով է խառը ձևի ինստիտուտի գործունեությունը Հայաստանում համապատասխանում միջազգային չափանիշներին և անհրաժեշտ գործելակերպին: Ուսումնասիրությամբ կարելի է հանգել այն դիքորոշմանը, որ այս կապակցությամբ Հայաստանում դեռևս առկա չեն կարևորագույն երկու սկզբունքներ, մասնավորապես, Անկախ հանձնաժողովների⁷ սոցիալական ուղղվածությունը և գործունեության սկզբունքները:

Նախ, ինչպես արդեն հիշատակվել է, պայմանական վաղաժամկետ ազատման արտադատական և խառը ձևերում հանձնաժողովները հիմնականում ունեն սոցիալական ուղղվածություն, այսինքն՝ հանձնաժողովներում, եթե նույնիսկ ներգրավված են նախաքննություն իրականացնող, բանտային ծառայությունների վերադաս կամ ուժային այլ մարմինների ներկայացուցիչներ (որը բացարձակ ցանկալի չէ), ապա վերջիններիս անդամությունը քանակային կամ տոկոսային որակ չի ստեղծում: Դրա փոխարեն նման հանձնաժողովներում ընդգրկված են հիմնականում հոգեբույժներ, պրոբացիոն ծառայողներ (սոցիալական աշխատողներ), և այլ սոցիալական ուղղվածության մարմինների կամ հասարակության ներկայացուցիչներ, որոնց նպատակներից է պայմանական վաղաժամկետ ազատման տրամադրման դեպքում «հատուկ պայմաններով» աջակցելը, «աջակցու-

թյան և վերահսկողության միջոցներով», «որոնք կոչված կլինեն հեշտացնել և հաստատել ազատվածի վերադարձը նորմալ կյանքի»⁸:

Ինչ վերաբերում է Հայաստանում վերը նշված հարցի կարգավորմանը, ապա հանձնաժողովների գործելակերպում կարևորվում են ոչ թե հիշյալ համգամանքները, այլ կատարած հանցագործության ծանրության աստիճանը: Այդ են վկայում կատարված ուսումնասիրության արդյունքները, որոնց համաձայն՝ 2009թ. հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների⁹ կողմից Անկախ հանձնաժողովների քննարկմանը ներկայացված 1460¹⁰ դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման հարցով հավանություն չի տրվել 924-ին, իսկ հավանություն է տրվել 536-ին, այն էլ այն դեպքում, երբ հիմնականում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար անհրաժեշտ ժամկետները լրացած են եղել վաղուց, և տվյալ դատապարտյալները պետք է կրեին պատժի շատ քիչ ժամկետներ: Այս գործելակերպն իր հերթին հակասում է Հանձնարարականի 6-րդ կետի պահանջներին (այն է՝ նվազագույն կամ սահմանված ժամկետը չպետք է այնքան երկար լինի, որ պայմանական ազատման նպատակին հնարավոր չլինի հասնել):

Երկրորդ, ինչպես ևս հիշատակվել է, պայմանական վաղաժամկետ ազատման արտադատական և խառը ձևերում հանձնաժողովների գործունեության հիմնական սկզբունքներն իրավական առումով ամրագրված են, այսինքն՝ տրվում են այն չափանիշները, որոնցով առաջնորդվում են հանձնաժողովի անդամները հարցերի քննարկման և որոշումների կայացման ժամանակ: Նման գնահատման չափանիշներ սահմանված են նաև ՀՀ օրենսդրությամբ՝ քրեակատարողական հիմնարկների վարչակազմների համար, երբ պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը լսում է դրական բնութագրվող և տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու հարցը¹¹: Մասնավորապես, սահմանվում է, որ նման չափանիշներ են՝ դատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ, դատապարտյալի վտանգավորության առումով ռիսկայնության աստիճանը, կարգապահությունը, մասնակցությունը կրթական, մշակութային և այլ ծրագրերին, ներգրավվածությունը աշխատանքին, ապագայի

նկատմամբ վերաբերմունքը, կյանքի ծրագրերը, ուղղման աստիճանը: Կարելի է ասել, որ պատիժը կատարող մարմնի գործողություններն արդեն իսկ «չափելի են», այսինքն՝ հնարավոր է եզրակացնել, թե արդյո՞ք ճիշտ է գնահատել պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը, երբ լսել է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու հարցը: Համապատասխան չափանիշներ (դատարանի հայեցողության սահմաններում) սահմանված են նաև դատարանի համար. դրա համար հիմք կարող է հանդիսանալ դատարանի համոզվածությունը, որ դատապարտյալն ուղղվելու համար այլևս կարիք չունի նշանակված պատժի մնացած մասը կրելու, դատապարտյալի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը և այլն¹²: Սակայն նույնը չենք կարող ասել Անկախ հանձնաժողովների գործունեության համար, որոնց գործունեության ընթացքում որոշումների կայացման համար որևէ չափանիշ սահմանված չէ, որն էլ իր հերթին հանգեցնում է հաճախ ոչ ճիշտ որոշումների կայացմանը: Ավելին, Անկախ հանձնաժողովների գործունեությունը ներառում է մի գործելակերպ, որն ընդհանրապես անընդունելի է և հակասում է Հանձնարարականի սկզբունքներին: Մասնավորապես, ինչպես վերը նշվել է, Հանձնարարականի 8-րդ կետի համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատելիս պետք է հնարավոր դարձվի դատապարտյալների նկատմամբ մի շարք անհատական պայմանների կիրառումը, որոնց թվում է «փոխհատուցում վճարելը կամ տուժողներին այլ ձևով փոխհատուցելը»: Իսկ Հայաստանում այս սկզբունքն ուղակիորեն նույնացվել է հայցից բխող պարտավորությունների կատարման հետ, նույնիսկ այն դեպքում, երբ դատապարտյալն արդեն իսկ օրենքով սահմանված կարգով սնանկ է ճանաչվել:

Անկախ հանձնաժողովների գործունեության գործելակերպի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նիստերի ժամանակ դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատմանը հավանություն տալու կամ մերժելու հետ կապված հանձնաժողովի գործունեությունը որևէ ձևով չի արձանագրվում, յուրաքանչյուր դատապարտյալի հարցի քննարկման արդյունքում իրականացվում է փակ գաղտնի քվեարկություն, որի արդյունքների վերաբերյալ ստորագրությամբ տեղեկացվում է դատապարտյալին՝ առանց պատճառաբանված որոշում կայացնելու: Սա իր հերթին հակասում է Հանձնարարականի ընդհանուր տրամաբանու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյանն ու սկզբունքներին: Մասնավորապես, Հանձնարարականի 23-րդ կետի համաձայն՝ միայն օրենքով նախատեսված բացառիկ հանգամանքները կարող են հնարավոր դարձնել ազատման հետաձգումը, որն իր հերթին նշանակում է, որ այդ չափանիշներն այնքան հստակ պետք է սահմանված լինեն, որպեսզի դրանց չհամապատասխանելը հնարավոր լինի դարձնել չափելի: Իսկ Հանձնարարականի 32-րդ կետի դ) ենթակետի համաձայն՝ պայմանական ազատում շնորհելու, հետաձգելու կամ վերացնելու մասին որոշումները, ինչպես նաև դրանց կից պայմանները սահմանելու կամ փոխելու մասին որոշումները պետք է ընդունվեն օրենքով սահմանված մարմինների կողմից հիմնավոր պատճառաբանությամբ:

Հատկանշական է նաև խնդրի քննարկումը ֆինանսական տեսանկյունից: Համապատասխան տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղի է ունենում դատապարտյալների (ինչպես նաև կալանավորված անձանց) ընդհանուր թվաքանակի տարեց տարի ավելացում (դատապարտյալների և կալանավորված անձանց ընդհանուր թվաքանակը Հայաստանում 2006, 2007, 2008, 2009, 2010 թվականների հունվար ամիսների դրությամբ կազմել է համապատասխանաբար 2873, 3083, 3539, 3965, 4313 մարդ, իսկ 2010թ. մարտի 1-ի դրությամբ՝ արդեն 4523 մարդ), որի պատճառներից մեկը հանդիսանում է պայմանական վաղա-

ժամկետ ազատման ինստիտուտի ոչ լիարժեք գործելը: Մեխանիկորեն դատապարտյալների թվաքանակի ավելացումը հանգեցնում է նաև պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների ավելացմանը: Եթե մեկ դատապարտյալի պահման տարեկան ծախսը կազմում է մոտ 130000 դրամ (նախատեսված 2010 թվականի պետական բյուջեով), ապա կարելի է պատկերացնել, թե դատապարտյալների թվաքանակի նման աճի դեպքում պատժի՝ որպես պետական հարկադրանքի կատարումը որքան ծախսատար է դառնում պետության համար:

Այսպիսով, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի՝ Հայաստանի Հանրապետությունում լիարժեք կիրառման համար անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնցով կանրագրվեն Անկախ հանձնաժողովների սոցիալական ուղղվածությունը և դրանց գործունեության՝ որոշումների կայացման չափանիշները: Տվյալ հանգամանքով էլ պայմանավորված՝ հիմք կդրվի ոչ մոտ ապագայում անցում կատարել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման արտադատական ձևին, երբ ավելի ընդգրկուն կլինի քաղաքացիական հասարակության մասնակցությունը նման որոշումների կայացմանը:

¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 2003թ. ապրիլի 18-ին, ՀՕ-528-Ն, օրենսգրքի 76-րդ և 94-րդ հոդվածներ:

² Տե՛ս ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 2004թ. դեկտեմբերի 24-ին, ՀՕ-60-Ն:

³ Տե՛ս Հանձնարարական թիվ (99)22՝ կապված բանտերի ծանրաբեռնվածության և բանտերի «բնակիչների» թվի նվազեցման հետ:

⁴ PC-CP սկսել է իր աշխատանքը 2000 թվականին և ավարտել է այն 2003 թվականի փետրվարին:

⁵ Ներկայացվել է CDPC-ին 2003թ. հունիսին:

⁶ Տե՛ս Բացատրական Հուշագիր պայմանական ազատման (պայմանական վաղաժամկետ ազատման) մասին ԵԽ Նախարարների Կոմիտեի (2003) 22 Հանձնարարականի վերաբերյալ:

⁷ Տե՛ս ՀՀ Նախագահի 2006թ. հուլիսի 31-ի «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-163-Ն հրամանագիրը:

⁸ Տե՛ս Ֆրանսիայի ՔԳՕ 731-րդ հոդվածը:

⁹ Տե՛ս ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի «Գատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկման կարգը հաստատելու մասին» թիվ 1304-Ն որոշումը:

¹⁰ Քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների կողմից նշված ժամանակահատվածում քննարկվել է 2887 դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատման հարցը, որից մերժվել է 1199-ը, իսկ մնացածը՝ հետաձգվել:

¹¹ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարի 2008թ. մայիսի 30-ի «Քրեակատարողական ծառայության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 44-Ն հրամանը:

¹² Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածը: